ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՆԱՄԱԿ «ԼՐԱՐԵՐ» ԳԱՐԲԵՐԵԱՆԻՆ

ՎԱՉԳԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

(Փարիզ)

Խմբագրությունը 1969 թ. № 7-ում տպագրած Ռ. Ա. Իշխանյանի «Հայերենի տերմինաշինության հարցեր» հոդվածի առթիվ հրատարակված նյութերից բացի[1] ստացել է մի շարք արձագանքներ։ Ստորև ընթերցողներին ենք ներկայացնում սիդնեյահայ մտավորական Վազգեն Անդրեասյանի նամակը՝ կրճատումներով.

«...Հայաստանի մեջ կը գտնվին հայոց լեզվին արթուն պահակներ։ ...Երբ նամանավանդ, բաղարամայր Երևանի մեջ, կան, «Լրաբեր» պարբերաթերթին հույլ մը խմբագիրներ՝ զորավիգ անոնց, որ կը ջատագովեն մաքուր, հարազատ և գեղեցիկ, ուրեմն նաև լայն զանգվածն մը հասկանալի հայերեն մը։

Կակնարկենք Ռաֆայել Իշխանյանի այն ուսումնասիրությունը զոր երևցած է 1969 տարվո «Լրարերի» թիվ 7 համարին մեջ «Հայերենի տերմինաշինության հարցեր» խորագրով։

Հոն հեղինակը կնշի, թե մեր գիտական-իմաստասիրական գրականությունը վերջին տարիներու ընթացքին մեծապես զարգացած է, սակայն տերմինարանությունը (զոր հասկանալի դառնալու համար մենք պիտի գրենք բառակերտություն), վրիպած է կամ պետք եղած չափով ուշադրության արժանացած չէ։ Ըստ հոդվածագրին, այդ աշխատությունները կատարված են «...ավելի շատ նեղ անձնական պատկերացումներով, ճաշակով, գիտական լեզվաբանության հետ կապ չունեցող տեսակետներով...»։

Հետևած ըլլալով մեր գրականության բոլոր ճյուղերուն, տարիներու մեր փորձառությամբ, բոլորովին համաձայն ենք տրված այս խիստ խոհուն վճռին պատկերագարդելու համար մեր գրողներուն անհոգությունը։

Անուրանալի է, որ երկար դարերու բացակայությունն մը հետո մեր հայրենիքը այսօր կգտնվի գիտության մարզերուն մեջ ալ առաջադիմներու շարքին մեջ, ուստի, անհրաժեշտ է նախ, խավարեն ի լույս բերել մեր լեզվին դանձերը, ու ապա, պատշաճեցնելով անոր մեջ ներմուծել ժամանակի նորությունները արտահայտող բառեր։

Առաջնորդող ոգին պետք է ըլլա, հայոց լեզուն պահել՝ հարազատ, ինքնատիպ, մայր երկրին մեջ և անկե դուրս գտնվող բաղմությունները մտքին հասանելի։ Անտարակույս դժվար գործ մը, նույնիսկ մեղ պես համառ, չարքաշ և արի ժողովուրդի մը համար։

---

[1] *Տե՛ս ԳԱ «Լրարեր», 1969, № 7, 9, 1970, № 12, 1971, № 1, 2, 5, 6։*

Ռաֆայել Իշխանյան, իր վերոհիշյալ գրության մեջ, հարցը քննած է բազմակողմանիորեն, փաստերով և լիովի... Համաձայն ենք իրեն հետ բոլոր կետերուն մեջ, այլապես մեր լեզուն կդառնա լաբիրինթոս մը։

Հոդ չէ թե մեկուն համար խառնիճաղանչը ըլլա վայելչագեղ։ Ճաշակի խնդիր է։ Բայց պայման է, էական, որ լեզուն բոլորին կողմե հասկնալի ըլլա։ Գեթ միևնույն սերունդի մը Մեծ մայրիկեն մինչև թոռնիկը, այն ալ ըլլա Հայաստանի մեջ, թե հեռաստաններու։

Մեջբերում մը Միքայել Նալբանդյանեն. «Խոսելու և գրելու Խորհուրդը այն է, որ ժողովուրդը կարդա և բան հասկանա»։

Ականատես, երբեմն մորս, ու դեռ շատ շատերուն հայերեն կարդալու գովելի ոգորումներուն, ըստ քմահաճույքի գործածված բառերը պարունակող բառարաններու չգոյությամբ, ձեռքի տակ թարգմանե մը զուրկ, ինքզինքս մխիթարված կզգամ Ռաֆայել Իշխանյանի հոդվածները կարդալե վերջ. և շնորհակալ մասնավորաբար «Լրաբերի» խմբագրության։

Տակավին կա մեզ խրախուսող հիմնական պարագա մը, այն է վստահությունը, որ ունինք մեր հայրենի մտավորականության հանդեպ, հայոց լեզվի հարստության ճանաչողության վերաբերմամբ։

Միթե՞ ուրիշներ, հեռաստաններու մեջ, մեր լեզվի, մեր ժողովուրդի բունեն կտրված վտիտ ճյուղերեն այնքան թույլ բռնած մարդիկ, պարբերաբար միայն այդ լեզուն գործածողներ, պիտի հանդգնեին անոնց դաս տալու։ Իհարկե ոչ։

Ոչ անիրավ և ոչ ալ անարդար։

Ընդհակառակը մենք շատ ու շատ երախտապարտ ենք մեր այսօրվան հայրենիքը կերտողներուն։

Անպայման՝ հայ ժողովուրդը ունի թաքուն բազում հարստություններ, ու խիստ իրավացի է նույն Իշխանյանը, երբ ուրիշ տեղ մը հայոց լեզվի պաշտպանության ի խնդիր, իր հոդվածը կսկսի գրելով, որ. «Հայ ժողովրդի ամենամեծ հարստությունը նրա լեզուն է՝ հայերենը»։

Եւ ի՞նչ հարստություն...

Ազգերը, ժողովուրդները շատվոր թե թվով քիչ պետք է ապրին մաքուր՝ բարոյապես թե մշակույթով։

Լեզուն՝ մաքուր, վճիտ արտահայտություններով խորապես կնպաստե հոգիներու ազնվացումին։

Մշակույթի այդ հզոր, անփոխարինելի մեծ ազդակը, որ ամեն ազգի համար իր լեզուն է, մեզ համար ունի կոչում մը ավելի՝ մեր միասնականությանն իարիսխն է...

Անվերապահ, կծափահարենք «Լրաբերի» անձնակազմը, բոլոր այն համեստ անհատները, որոնք մարտկոցներ կկառուցանեն, որպեսզի մեր լեզուն պաշտպանեն դայն գործածողներու ծուլության դեմ»։